Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6791

327.3
U-89

1933

327.3 6919-ԿՌ
ՀՐ-90

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՈՎՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԱԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԴԻՐԵԿՏԻՎ ՆԱՄԱԿ

81

ՄՈՊՐԻ-ի ԽՍՀՄ Սեկցիայի 1933 թ. ֆինանսական աշխատանքի խնդիրների մասին.

ՄՈՊՐ-ի բոլոր կոմիտեներին, Բջիջներին ու ընդամներին, ՄՈՊՐ-ի բոլոր վերստուգիչ հանձնաժողովներին

Թանկագի՛ն ընկերներ

ՄՈՊՐ-ի համաշխարհային կոնգրեսը վերստուգիչ հանձնաժողովի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում առանձնապես կանգ առնելով ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի սեկցիայի, վորպես ՄՈՊՐ-ի Գործկոմում առաջապահ և առաջնորդող սեկցիայի ֆինանսական գործունեության արդյունքների վրա, հետևյալ վորոշումը հանեց. «ՄՈՊՐ-ի համաշխարհային կոնգրեսը նշելով ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ Սեկցիայի ձեռք բերած նշանակալից նվաճումները ֆինաշխատանքների բնագավառում՝ առաջարկում է ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի սեկցիային իր ամբողջ ուշադրությունն ուղղել իր ֆինանսական աշխատանքի հետագա բարձրացման վրա, անհրաժեշտ պայման դնելով սեկցիայի նյութական բազայի

2010
2001

հիմքի ամրացումը՝ անդամավճարների 100 -տոկոսանի հավաքի հաշվին, վորպես ՄՈՊՐ-ի անդամակցական մասսայի կազմակերպվածության և հեղափոխության մարտիկների ոգնության շուրջը համախմբված լինելու արդյունք՝ կառուցվող սոցիալիզմի յերկրում»:

Համաձայն ՄՈՊՐ-ի կոնգրեսի վերոհիշյալ հրահանգի, ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի նախագահությունը,-ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի տեղական կազմակերպությունների 1933 թ. դիրեկտիվ նախահաշիվների վերաբերմամբ ԿԿ-ի Ֆինբաժնի զեկուցման համաձայն,-վորոշեց՝ ՄՈՊՐ-ի ֆինանսական գործունեությունը պատշաճ բարձրության վրա դնելու խնդիրը վճռականորեն իրականացնելու նպատակով՝ ՄՈՊՐ-ի 1932 թ. նյութական բազան կառուցել բացառապես անդամակցական ու մուտքի վճարներ մուծելու և Համամիութենական ինտերնացիոնալ կապի խորհրդակցության (1932) կողմից սահմանած՝ յեռամսյակին մի անդամ՝ ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամի կողմից չեֆական տասկոպեկանոցը (տարեկան 40 կոպ) մուծելու հիմունքներով:

ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ հաղորդելով այս մասին, առաջարկում է Ձեզ՝ անհապաղ ծավալել ՄՈՊՐ-ի անդամների մեջ մասսայական լայն աշխատանք՝ լուսաբանելու հետևյալ խնդիրները, վորոնք դրված են ՄՈՊՐ-ի ամբողջ կազմակերպության և ՄՈՊՐ-ի ամեն մի անդամի առաջ՝ ՄՈՊՐ-ի ֆինանսական աշխատանքի բնագավառում 1933 թ. համար

1. ԸՆԴԵՄՈՒՑԵԼԻՆ ՑԵՎ ՄՈՒՏՔԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ

327.3
Ս-90

ՄՈՊՐ-ի ֆինանսական հաջող աշխատանքը տեղերում տարվող ամբողջ մասսայական ինտերնացիոնալ աշխատանքի արտացոլումն և հանդիսանում և կազմակերպության յուրաքանչյուր անդամի ինտերնացիոնալ պարտականությունները գիտակցորեն կատարելու ցուցանիշ ծառայում:

ՄՈՊՐ-ի ամեն մի անդամի կարևորագույն ինտերնացիոնալ պարտականությունը հանդիսանում է անդամավճարների ժամանակին մուծելը:

Անդամավճարները պետք է կազմակերպչական սկիզբը ծառայեն ՄՈՊՐ-ի աշխատանքում և նրանց ժամանակին վճարումը ցուցանիշ է նրա, թե մեզանում ինչ չափով կազմակերպչորեն ամրապնդված է անդամների առկա թիվը, թե ՄՈՊՐ-ի տարած մասսայական-զասպիտարակչական աշխատանքն ինչ չափով է իսկապես ամրացրել ՄՈՊՐ-ի անդամների գիտակցության մեջ՝ կապիտալի բանտարկյալներին կազմակերպված և սիստեմատիկ ոգնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, ՄՈՊՐ-ի հիմնական նյութական բազան և դրամական մուտքերի կարևորագույն աղբյուրը հանդիսանում են ժամանակին և լրիվ հավաքվող անդամավճարները: Անդամավճարներից կազմվող գանձումների

աճումը, միաժամանակ հանդիսանում է կազմակերպության անդամների թվի աճման իսկական ցուցանիշ:

2. ԿՈՄԿՈՎՈՐ ՄՈՒԾՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կամավոր մուծումները և նվիրատվությունները, ամեն տեսակի հանգանակությունները— գանձատուփերով, թերթիկների տարածմամբ՝ այսպես կոչված «քաղբանտարկյալների թախտերի պահպանության համար», փոխադրության պարատատոմսերի անհատական նվիրատվությունները, ներկայացումների, համերգների, վիճակախաղերի կազմակերպումը, բուֆետներ, կրպակներ, պահեստ և այլն, իրենց բնույթով վորպես բարեգործական կամ առևտրական գործունեության հետ կրոգներ են, վորոնք ըստ էության հետին պլանի վրա են քշում անդամավճարների քաղաքական և կազմակերպիչ նշանակությունը: Ուստի և պատահական չէ, վոր մեզանում անդամավճարներն ընդամենը միայն 40 տոկոսով են հավաքվում (մոտավորապես), մինչդեռ կամավոր մուծումները և նվիրատվությունները նախահաշվով առաջադրածից շատ անդամ ավելի յեն գերազանցում: Մինչև այժմ մեր աշխատանքի պրակտիկայում գոյություն ունեցող վերոհիշյալ հանգանակությունները ամբողջովին պետք է վերանան:

Անհրաժեշտ է նույնպես ի նկատի ունենալ, վոր կամավոր ընկերությունների ոգտին անցյալում աշխատավարձից կատարած հատկացումները կտրականապես արգելվում են արհմիութենական որգանների կողմից: Հետագայում ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնանա քաղբանտարկյալներին և նրանց ընտանիքներին ՄՈՊՐ-ի անդամների սիստեմատիկ ոգնություն կազմակերպելու վրա՝ անդամակցական մուծումները և չեֆական տուս կոպեկանոցը կանոնավոր և ճշտորեն վճարելու միջոցով:

3. ՉԵՖԿԱՐՆ ՏՈՒՍ ԿՈՊԵԿԱՆՈՑԸ

1932 թ. ոգոստոսի 12–15 ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ կից տեղի ունեցած ինտերնացիոնալ կապի խնդիրներին նվիրած համամիութենական առաջին խորհրդակցությունը վորոշում հանեց այն մասին, թե ՄՈՊՐ-ի ամեն մի անդամ, վորոշ բանտի քաղբանտարկյալների վրա ՄՈՊՐ-ի բջջի վերցրած չեֆության կարգով, պետք է ՄՈՊՐ-ի կասսան մուծի ամեն մի յեռամսյակում 10 կոպեկ, վորպես ոգնություն յենթաչեֆ քաղբանտարկյալներին և նրանց ընտանիքին: Այդ վորոշումը չեֆության համար հավաքված բոլոր գումարներն ընդհանուր կազմակերպված հունի մեջ և անցկացնում է ՄՈՊՐ-ի բոլոր անդամներին հնարավորություն և տալիս հավասար չափով ոգնելու քաղբանտարկյալներին և նրանց ընտանիքին, անդամավճար-

ներից դուրս: Հանդանակության այդպիսի ձևը ամենից ավելի լավ է կապում ֆինանսական աշխատանքը չեֆության գծով տարվող մեր ամբողջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետ (չեֆական նամակագրություն քաղբանտարկյալների հետ, այն յերկրների բանվոր դասակարգի դրության ուսումնասիրությունը, վորի բանտումն են փակված հեղափոխության յենթաչեֆ մարտիկները և այլն):

Չեֆական տաս կոպեկանոցը պետք է ծառայի նաև վորպես կազմակերպիչ մոմենտ անդամավճարների մուծումը ժամանակին ստուգելու գործում: Անհնարին է, վոր ՄՈՊՐ-ի անդամը, չեֆական տաս կոպեկանոցը վճարելով, միաժամանակ չմուծի անդամավճարները և ընդհակառակը: Այստեղից պարզ է, թե ինչպիսի նշանակություն ունի չեֆական տաս կոպեկանոցի ժամանակին հավաքումը, վորպես ՄՈՊՐ-ականների կարևորագույն ինտերնացիոնալ խնդրի կատարումը:

4. ՌՅԼ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

Տեղական կազմակերպությունների դիրեկտիվ նախահաշիվներում, բացի անդամավճարների դրամական մուծումից և չեֆական տասկոպեկանոցից (իքնոբտինքյան հասկացվում է և՛ անդամակցական տոմսերի, և ՄՊԲ քարտերի համար), վորոշ տեղ են գրավում ՄՈՊՐ-ական հեկտարի

ցանքից, ինտերնացիոնալ շաբաթորյակներից և յենթաչեֆ քաղբանտարկյալների անունով պետ փոխառությունների պարտատոմսերի կոլեկտիվ գնումից գոյացած յեկամուտները:

Այդ գանձումները ՄՈՊՐ-ի նյութական բազան ուժեղացնելու հետ միասին, նաև ունեն կազմակերպիչ արտադրական նշանակություն, մեր միության սոցիալիստական շինարարության և լրացուցիչ ռեսուրսների մոբիլիզացիային ՄՈՊՐ-ի բջիջները մասնակից անելու գործում: Անհրաժեշտ է նույնպես հիշել, վոր յենթաչեֆ քաղբանտարկյալների ոգին պետ փոխառությունների պարտատոմսեր ձեռք բերելը պետք է անցկացվի միայն կոլեկտիվորեն՝ բջջի անդամների կողմից և խիստ կամավոր սկզբունքով:

Իսկ պետփոխառությունների պարտատոմսերի անհատական նվիրատվությունները պետք է դիտվեն վորպես ավելցուկ նրանց վրա, և այդպիսի դեպքում ՄՈՊՐ-ի բջջի ամեն մի ակտիվիստ մոպրականի պարտականությունն է բացատրել այդպիսի նվիրատուին պետփոխառությունների նշանակությունը և նրանց ամրացումը փոխառության տերերի անվան:

5. ՄՈՊՐ-Ի ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱՐԱՐԻ ՄԵՋԻՆ

Ֆինանսական աշխատանքի նոր խնդիրների կազմակերպությամբ հավաքարարի դերը նշանակալից չափով բարձրանում է, վորովհետ-

ում ՄՈՊՐ–ի հավաքարարը պետք է առանձնապես կարողանա կողմնորոշվել ներկա մոմենտում ՄՈՊՐ–ի առաջ ծառացած ընդհանուր քաղաքական խնդիրներում: Միայն բավական չափով քաղաքականապես պատրաստված հավաքարարը կարող է հեղինակություն ձեռք բերել անդամակցական մասսայի մոտ, կարող է մասսայական–բացատրական աշխատանքի կարգով համոզել անդամակցական մասսային՝ անդամավճարները և չեֆական տաս կոպեկանոցը ժամանակին և լրիվ վճարելու անհրաժեշտության մեջ: Լավ հավաքարարը դրանով բարձրացնում է իր կազմակերպության հեղինակությունը և դերը աշխատավոր մասսաների աչքում, վորը և նպաստում է կազմակերպության շարքերը նոր անդամներ ներգրավելուն: Անհրաժեշտ պարտադիր կանոն սահմանել, վոր անդամավճարների, չեֆական տաս կոպեկանոցի հավաքումները կատարվում են յեռամսյակներով, այլ վոչ մեկ անգամից, կես տարով կամ մեկ տարով, վորովհետև հավաքարարների ավելի հաճախ հաղորդակցությունը մասսայի հետ նպաստում է անդամակցական մասսայի լավագույն ամրապնդմանը կազմկերպության մեջ և առաջիկայումն ել նոր անդամների ներգրավմանը ՄՈՊՐ–ի շարքերի մեջ, վորը կազմակերպության անդամների հոսունության դեմ պայքարելու լավագույն միջոցն է հանդիսանում:

Հավաքարարների բավարար քանակ ջոկելու (մոտավորապես 15–20 անդամի համար մեկ հավաքարար), նրանց հետ քաղաքական դասախարակչական աշխատանք տանելու և նրանց սիստեմատիկորեն հրահանգելու վրա ՄՈՊՐ–ի Կոմիտեները և բջիջները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն: Ամենաաչքի ընկնող և աշխատանքի մեջ առանձնապես իրենք իրենց ցույց տված հավաքարարներին քաջալերելու մեթոդի կիրառմանը պետք է նույնպես բավարար ուշադրություն հատկացվի:

ՄՈՊՐ–ի կոմիտեները պետք է ի նկատի ունենան, վոր խոսքը վերաբերում է ՄՈՊՐական ֆինանսական ակտիվի կես միլիոնանոց բանակին, և արհամարհել նրանց, նշանակում է նախապես չկատարել դիրեկտիվ նախահաշիվը և միաժամանակ թուլացնել կազմակերպության հետագա աճման կարևոր տեմպերը: Անհրաժեշտ է ել ավելի ամրացնել կոմիտեների կապը հավաքարարների հետ՝ հատուկ խորհրդակցությունների, գեղարվեստական ինտերնացիոնալ յերեկույթների և մասսայական աշխատանքի այլ ձևերի միջոցով:

6. ՖԻՆԱՆՍԱՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԵՐԴԻ ՄԱՍԻՆ

Մինչև Կապի Ժողովրդական Կոմիսարիատի հատուկ ցուցումների հրատարակությունը, փոստային փոխադրումների, նոր բլանկների և անդամակցական նոր տոմսերի, տոմսին կից չեֆական թերթիկի և չեֆական հա-

տուկ մարկայի պատրաստումը, չեֆական տաս կոպեկանոցի հավաքումը պետք է մարել անպայմանորեն 5 կոպեկանոց մարկաներով (2 մարկա) կամ 15 կոպեկանոցով և 5 կոպեկանոցով, յեթե խոսքը յերկու յեռամսյակի մասին է: Այդ մարկաները փակցվում են ՄՈՊՐ-ի անդամակցական տոմսի չապկի ներսի կողմում: Փոստային փոխադրության բլանկներում չեֆական մարկաներից ստացվող դանձումները ցույց են տրվում առանձին հոդվածում «անդամակցական մարկաների համար» հետո ել ներքևում գրով ավելանում է «նույն թվում չեֆական մարկայի համար.... ռ.... կ.: ՄՈՊՐ-ի ազգային ԿԿ, յերկրկոմիտեները և մարզկոմները այդ հիման վրա չեֆական տաս կոպեկանոցից ստացվող դանձումների հաշվառումը վարում են դանձումների հատուկ սյունակում:

7. 1933 Թ. ԴԻՐԵԿՏԻՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1933 Թ. դիրեկտիվ նախահաշիվները ամենամոտիկ օրերումս կուղարկվեն կազմակերպություններին: Սակայն կոմիտեներն հենց այժմ, առանց նախահաշիվների սպասելու, կարող են բաժանել դիրեկտիվի գումարներն ըստ բջիջների, հաշվի առնելով վերոհիշյալ յեկամուտների մեր հոդվածները 1933 Թ. համար: Ինչ վերաբերում է ՄՈՊՐ-ի անդամների թվի աճման կոնտրոլ թվերին, ԽՍՀՄ-ի

ՄՈՊՐ-ի ԿԿ. նախագահությունը վորոշում ընդունեց, վոր կազմակերպություններն իրենց թվական կազմը անպայմանորեն հասցնեն այն կոնտրոլ թվին, վոր սահմանված է նրանցից ամեն մեկի համար 1932 Թ. նախահաշվով: Դիրեկտիվ նախահաշիվները բջիջներին, իսկ վերջիններիս միջոցով ՄՈՊՐ-ի անդամներին հասցնելուն այս տարի պետք է առանձին նշանակություն և պատասխանատվություն տրվի, վորովհետև այդ բանը ՄՈՊՐ-ի ֆինաշխատանքների բնագավառի նոր խնդիրները լուսաբանելուն և ՄՈՊՐ-ի դրամական յեկամուտների մեջ բեկում ստեղծելուն պետք է աջակցի: Անհրաժեշտ է աշխատել, վոր դիրեկտիվ նախահաշիվներն անպայմանորեն հասնեն ամեն մի բջջի, ՄՈՊՐ-ի ամեն մի անդամի և պատշաճ կերպով մշակվեն ՄՈՊՐ-ի բջջի ընդհանուր ժողովներում: ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ հիշեցնելով Ձեզ այն բացառիկ կարևոր դերի մասին, վոր ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ սեկցիան է խաղում ՄՈՊՐ-ում, վորպես առաջապահ և առաջնորդող սեկցիա, պարտավորեցնում է Ձեզ ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի ապահովվեն ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ ֆինանսական նոր քաղաքականության հաջող կենսագործումը և 1933 թվի դիրեկտիվ նախահաշվի լրիվ կատարումը, նկատի ունենալով նաև այն, վոր սահմանագծի այն կողմը գտնվող սեկցիաներից շատերը, չնայած բոլոր ռեպրեսիաներին, անդամավճարները հա-

վաքելու գործում ավելի շատ նվաճումներ ունեն, քան թե ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ սեկցիան: Այս բանն առանձնապես պետք է հաշվի առնեն ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիաները, որոնք մրցակցության մեջ են ՄՈՊՐ-ի անդրսահմանային սեկցիաների հետ:

ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ կոչ է անում ՄՈՊՐ-ի բոլոր կոմիտեներին, բջիջներին և անդամներին՝ ուժեղացնել աշխատանքն անդամավճարները և չեֆական տաս կոպեկանոցը սիստեմատիկորեն հավաքելու շուրջը, կիրառելով ոգմրցման և հավածայնության բոլոր մեթոդները և դրանով էլ ապահովել նորմալ, անխափան ոգնությունը քաղբանտարկյալներին և նրանց ընտանիքներն:

ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ գիտենալով, որ ՄՈՊՐ-ի անդամներից շատերը կապիտալի բանտարկյալներին ոգնելու համար պատրաստ են իրենց անդամավճարները տալուց ավելին նվիրել, կոչ է անում նրանց, կենտրոնացնել իրենց էներգիան և խանդավառությունը՝ ՄՈՊՐ-ի կոմիտեներին և բջիջներին իրենց աշխատանքների ընթացքում զգալի ոգնություն ցույց տալու համար, ՄՈՊՐ-ի անդամների անդամավճարները և չեֆական տաս կոպեկանոցն ինչպես ժամանակին հավաքելու, նույն պես և վերջիններիս ստուգում կատարելու համար:

ՄՈՊՐ-ի վոչ մի անդամ, առանց անդամավճար և չեֆական տաս կոպեկանոց մուծելու, չպետք է մնա: ՄՈՊՐ-ի ամեն մի անդամի հիմնական և կարեվորագույն ինտերնացիոնալ խնդիրն է այս, որ 1933 թ. պետք է լիակատար կերպով իրագործվի:

Այս նամակը քննության առեք Ձեր կոմիտեի նախագահության նիստում և Ձեր բջջի բյուրոյի ու ռեվիզիոն կոմիսիայի միացյալ նիստում:

ՄՈՊՐ-ական բարևներով

Հ.Խ.Ս.Մ. ՄՈՊՐ-ի ԿԵՆՏԿՈՄԻ նախագահ՝
Յե. ՍՏԱՍՈՎԱ

ԿԿ ՖԻՆԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ ՅԱ. ԳՈՒՐԱԼՆԻԿ

15 դեկտեմբերի 1932 թ.

Սրբագրեց՝ Գ. Հակոբյան.

ՀԱԿ — ՍՍՌ
Ա. Մանվելյանի անվան

Գեհրատի տպարան. Յերևան.

Գլավլիտ 9146 Գրավոր 227 Տիրաժ 2000

2013
<< Ազգային գրադարան
NL0039846

226

327.3
U-89